

ՁԱԺԱՆՈՐԻԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ	համար
Տարեկան	12 ֆր
Վեցամսեայ	6 "
Արտասահմանի	
համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Աւերիկայի	համար
Տարեկան	3 ֆր
Վեցամսեայ	1.50 "

Մանուկն սուր աստիճանի երեխին համար 40 ս. իսկ վերջին երեխին համար 20 սակրիս է. երեխին աւերիկայի վերջին համար 20 0/0 զեղչ կըլ ըսյ:

Վասնայի համար ձեռք 10 սակրիս

ՁԱՊՈՒՆ

ՈՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԴՏԵՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵՐԱԲԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ և դրամ դրկիչ
Խմբագրութեանն հասցիին

Редакция на вѣстникѣ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար
ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք և ս յեւ տրուիր

ՉՈՐԵՔԵՐԱԲԻ ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՇԵՆԳԻՆԸ ՊԵՏԲ Է ԿԱՆԽՈՎ ՎՃԱՐԷ

ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Գ.

Ռուսահայաստանը և Տաճկահայաստանը երկու մայր արմատներ են, որոնք միշտ սնունդ կուտան ճիւղերուն և կապրեցնեն զանոնք: Սյգ ճիւղերն են մեր գաղթականութիւնները, որոնք եւս պէտք է հաւաքուին ազգային միութեան շուրջը: Զգե՛լով Ռուսաստանի և Տաճկաստանի գաղթականութիւնները խօսինք Հայաստանի սահմանակից գաղթավայրեր մը—Պարսկահայոց վրայ:

Պարսկաստանի հայերը չը կրցան հասկնալ վերածնութեան այն շրջանը, որ ապրեցաւ Հայութիւնը ընդհանուր առմամբ: 80ական թուականներէ ի վեր մեր մէջ սկսած ազատագրական և յառաջդիմական շարժումներուն չը մասնակցեցան անոնք, սկստիւ մասնակցութիւն ցոյց չը տուին նաեւ յեղափոխութեան մէջ: Անոնց տուած զոհերը կարելի է մատերու վրայ համրել: Այո՛, Սալմաստ իբր սահմանակից գաւառ տուաւ օգուտներ, հիւրասիրեց և դիւրութիւններ ընծայեց յեղ. խումբերու և գործիչներու, բայց այդ աւելի բացառութիւն մըն է քան թէ օրէնք մը:

Պարսկաստանի մէջ կապրին բաւական մեծ թուով հայեր և կը կազմեն երկրին ամենէն յստաջադիմական ու նիւթապէս ապահովուած տարրը, իրենց ձեռքն է վաճառականութիւնը, իրենց միջոցաւ կը կատարուի ապրանքներու արտահանութիւնը: Անոնք կը վայելին պարսից կառավարութեան մասնաւոր առանձնաշնորհումները: Հայոց առաջնորդը հոն մեծ ազդեցութիւն ունի թէ կառավարական շրջաններու և թէ ժողովուրդին մէջ: Անոնցմէ զատ քաղաքակրթական տեսակետով անոնք կը վայելին

ամէն սզատութիւն: Դեռ երկար չէ, որ Շահը ֆէրմանով մը Հայոց համայնքներուն կուտար մասնաւոր արտոնութիւններ, վարժարաններ բանալու, լսարաններ հիմնելու ու իր հովանաւորութեան տակ կառնէր Հայոց դպրոցները:

Հայաստանի այնքան մօտ այս գաղթականութիւնը երբ մղուի և ինչպիսի գործունէութեան ընդհանուր հոսանքին մէջ կարող է մեծ օգուտներ տալ մեզի: Ան մինչեւ հիմա չէ մասնակցած ազգային շարժումներուն, որովհետեւ պարսկահային մօտ կը պակսի իր ու իր ազգի վիճակին գիտակցութիւնը: Տգիտութեան խաւարով մթաղած է ամբողջ Պարսկաստանը: Արեւմտ Պարսկահայերը փրկելու ամենաազդու միջոցն է անոնց մէջ տարածել գիտութիւն ու գաղտարակութիւն՝ դնել Հայոց դպրոցները կանոնաւոր ու մանկավարժութեան պահանջներուն համապատասխանող գրութեան մը մէջ:

Այս միտքերը բաւական ատենէ ի վեր արդէն դարձած են լուրջ շրջանակներու խորհրդածութեան առարկան, թէ կովկասէն և թէ ուրիշ կողմերէ այժմ հոն այս ուղղութեամբ կը գործեն կարեւոր ուժեր: Շարժումը սկսած է և մենք կը ցանկայինք, որ ան շուտով տար ցանկալի արդիւնք: Այն ատեն ամենայն սպասովութեամբ կարող ենք ըսել, թէ Պարսկահայն ալ կը բերէ և իր ուժերը կը միացնէ ազգային ընդհ. գործի շուրջը:

Մարգարէտեանի

ԳՐՈՒԹԻՒՆԸ
Թ Ի Ի Բ Ի Ո Յ Մ Է Զ

Թիւրքիոյ ամէն անկիւնին մէջ կան իլլուտումներ: Եւրոպական մամուլը այս մասին ամէն անգամ կը բերէ տեղեկութիւններ, որոնց վրայ կուզենք հոս կանգ առնել: Մասնաւորապէս հետաքրքիր են Կոնստանդնուպոլստան

ցած տեղեկութիւնները:

Կ, Պոլսէն մարտ 18 թուականաւ այս թերթին կը գրեն, թէ Զէքի փաշա չորրորդ զօրքանակի մէջ գունդովը երկրիկայէն դէպի Սուշ ճամբայ ելած է: Սուլթանի կառավարութեան նրպատակը պարզ է, պատերազմի ներկայացուցած առիթէն կուզէ օգտուիլ և իր հաշիւը մաքրել ներքին թշնամիներուն հետ: Զէքի փաշայի շարժման պատճառը ուրիշ ոչինչ կարող է ըլլալ, այլ միայն Սասունի դէմ քայլել, որու բնակիչները անցեալ ամառ տէր դարձած էին իրենց բնագաւառին: Արդէն Սուշի շրջակայքէն կը հասնին կոտորածներու լուրեր: Հայաստանի ազգաբնակչութիւնը կը գտնուի ծանր դրութեան մէջ: Ոչ գիւնազեղները և ոչ ալ Եւրոպայի հասարակաց կարծիքը կուզէ շարժիլ: Դանակը ոսկորին հասած է, Հայերը թէեւ անզէն բայց պիտի դիմեն ապստամբութեան: Կեանքը այլեւս Հայերուն համար նշանակութիւն չունի, որովհետեւ անոնք ստիպուած են շարունակ սարսափի և բռնութեան տակ ապրիլ: Սասունի հայ գիւղացիները պատերազմական տրամադրութեան մէջ են: Մշոյ գաւառին շուտով պիտի տիրեն թիւրք զօրքերը, բայց Սասնոյ լեռներուն առջեւ պիտի տեսնեն հանգ և զօրաւոր դիմագրութիւն մը: Կըռիւր պիտի տեսէ երկար և պիտի ըլլայ արիւնահեղ, ճիշտ ինչպէս 1895ին Զէյթունի մէջ:

Հայաստանի մէջ հրաբուխը պայթելու վրայ է, դիւանագէտները պէտք է ջանան անոր առջեւ առնել:

Նոյն թերթը հետաքրքիր տեղեկութիւններ կը բերէ նաեւ Եւրոպական թիւրքիայէն:

Զէթանբուն և թիւրք զինւորներու միջեւ ընդհարումները երթալով կը շատանան: Ղեկեւեալ տեղեկութիւնները շատ նոր են և կը բոլորին թիւրքական ազգաբնակիչներէ: Ալէքանդրի շրջակայքը ե-

րեւան եկած են բազմաթիւ յեղափոխականներ: Ազգաբնակչութիւնը անոնց կողմն է, անոնց կուտայ պաշար, հագուստ և առաջնորդողները կը պահէ:

Ստիկանական և զինւորական պատերը ստացան նոր յաւելումներ: Գումանակ գիւղի մօտ պղտիկ չէթաի մը և զօրքին միջեւ տեղի ունեցաւ կռիւ մը: Յեղափոխականները երեք զինւոր քապանելէ ետք յաջողած են թրքական շղթան կտրել և անհետանալ: Նէվէնսքի գիւղին մօտ 80 յեղափոխականներ կռուի բռնուած են մեծաքանակ թրքական զօրքի հետ: Երկու կողմէն ինկած են 11 մարդ, 20 հոգի ալ վիրաւորուած են:

Յայտնի է թրքական ազգաբնակչութեան սովորութիւնն է ճշմարտութիւնը ծածկել և ստել:

Սէլանիկի մէջ ապրող պուրկարներուն մէջ կը տիրէ մեծ յուզումը: Ստիկանութիւնը անանուն նամակէ մը տեղեկացած է: Թէ յեղափոխականները նոր ուժաւորումներ ընելու ծրագիրներ կը պատրաստեն: Ասոր վրայ եղան խուզարկութիւններ և կատարուեցան բազմաթիւ ձեռքարկումներ: Երկրին ներսերէն եկած լուրերը շատ ծանրակշիռ են: Ասոնք նշաններ են, որոնք կը ցուցնեն թէ յեղափոխութիւնը անխուսափելի է և շուտով պիտի ծագի: Եթրուժայի շրջաններէ բազմաթիւ յեթաններ Պուլկարիայէն անցած են թիւրքիա: Այստեղ գտնուող զօրքին և արշաւող յեղափոխականներուն միջեւ տեղի ունեցած են արիւնայեղ ընդհարումներ: Նօրերս թիւրք զօրքը չէթայի մը մուտքը կուղէր արգիլել: յեղափոխականները 8 զինւոր և սպայ մը սպանելէ ետք ետ քաշուած են դէպի Պուլկարիա:

Կէրկիլիի մօտ մեծ խումբի մը և թիւրք զօրքին միջեւ տեղի ունեցած են մեծ ընդհարումներ: Յեղափոխականները կորսնցրեցած են 21 հոգի, թիւրքերը 18 հո-

գի . Յեղափոխականները յաջողած են թրքական շղթան ճեղքել և իրենց վիրաորեալներն ալ հետեւինն առնելով լեռները քաշուի :

Թիբեթի մօտ գիրք գրուած են 600 յեղափոխականներ , որոնց թիւը երկուամիջակարար անալ . Զօրքը հրահանգ ստացած է ամէն ուրեք յեղափոխականներ փնտաել և հալածել զանոնք :

Պիթոլիաի մօտ մակեդոնացիները սպաննած են երկու վաճառականներ , որովհետեւ վերջիններս թիւրք կառավարութեան կը ծառայեն եղեր իբրեւ մատանիչներ :

Լիւբուսի մօտ տեղի ունեցաւ կոխ մը . Ապստամբները կորսնցուցին 5 յարկ , թիւրքերը 4 զինուորներ :

Յեղափոխականները զարկին և հալածեցին թիւրք զինուորները :

ՆԵՎԱԻ ԱՓԵՐԵՆ

Պետերբուրգէն մեայթին գրուած թղթակցութենէ մը կը քաղենք հետեւեալը .

«Մամուլը կաշկանդուած է . Այս պատճառով ալ ամէն օր երեսան կելին տարածալուծիւններ ու սուտ լուրեր : Մալոններու եւ մամուլի մէջ կը խօսուի սայտական հերոս մեծ իշխան Յիրի Վլադիմիրովիչի պատերազմի վայրը մեկնելուն վրայ : Սա առաջ արտասահման գնաց եւ անսպասելի կերպով ետ դառնալով իր եղբոր մեծ իշխան Պորիսի հետ որոշեց պատերազմի երթալ : Ասոր վերայ պահպանողական եւ մեծ իշխաններու պալատէն ներքնուող Մովսիս վսկիյա Վէտովովի թերթը յողուածի մը մէջ պատերազմի գացող ցարերու եւ մեծ իշխաններու ցանկ մը յառաջ թերթով այսպէս կը վերջացնէ իր յօդուածը . «Իր ուսական սրտով կը հասկնայ Ռուսաստանը ներքին այն ցաւը , որ վեհախառ ծնողները կրողան կուտի մեկնող իրենց որդիներուն համար : Բայց Ռուսաստանը հաւատք ունի , որ անոնք պատերազմական թափններով զարգարուած անվնաս նստ պիտի դառնան հայրենի օճախը :»

Թերթի այս տողերը ուղղուած են Յարին , գահաժառանգին եւ մեծ իշխաններուն ղէմ , որոնք իրենց նախահայրերուն օրինակներուն շէն հետեւին :

Այստեղի ընկերութեան մէջ պատերազմի նկատմամբ նշմարելի է քառասուն ու կեղծ գրութիւն մը : Այն բոլոր լուրերը , որ կը խօսին պատերազմի պատճառով Ռուսիոյ մէջ տիրող ոգեւորութեան մասին քոլորտ վին անճիշտ են եւ սուտ . Բացի քանի մը լուրջ խորհող թերթերէ , ինչպէս Մովսիսայի պոփսուրներու օրգանը «Ռուսկիյա Վէտովովի» , միւս լրագրիւնները կը ջանան ազդակալի ֆրանզներով ժողովրդական զանգուածներու հայրենասիրութիւնը հրահրել : Հարուստ դասակարգի զոհարերութիւնը միայն խօսք մնաց եւ հնչիւն դրամ չզարձաւ : Մաղբով ու հեգնութեամբ ընդունուեցաւ գահաժառանգ մեծ իշխան Միքայէլ Ալէքսանդրովի :

չի 100,000 ռուպլի նուէրը , որովհետեւ ան հարեւաւոր միջոցներու հարստութիւն ունի :

Իրաւ է Պետերբուրգ եւ Մովսիս մէկու կէսական միջոցն պալատան բարձր պաշտօնէակ մը մէկ միջոցն , ֆինլանտական սէնատը կառայ ահա մայ մէկ միջոցն ռուպլի նուէրեցին , բայց այս ամէնը նոյնիսկ մէկ երկու մարտանու գնելու չեն բուեր :

Լրագրիւններու միջոցաւ գրգռուած հասարակաց կարծիքը իր սլաքները կուղղէ արտասահմանին ղէմ . ուր կը մատնեն Ռուսաստանը եւ չարաչար կո գործածեւ անոր իրաւունքները : Կոմս Բէնեդիկտի ճանապարհորդութեան շնորհիւ մամուլը որոշ չափով զարեցաւ Անգլիոյ ղէմ յարձակելէ եւ կառավարութեան խորհուրդ տալէ . թէ թիպէթի արշաւանքի վրէժը լուծելու համար՝ ան յարձակի Հնդկաստանի վրայ :

Կոմս Բէնեդիկտի լուրջ եւ խոհուն զիւանագէտ մը իր անող զատողութեանց պատճառով արքունիքին եւ նախարարներուն աչքին փոշը դարձած է : Բէնեդիկտի խորհուրդ տուած է խոհեմ գտնուել եւ խնայել Անգլիան , որ պատերազմէն ետք տեղի ունենալիք միջազգային համաժողովի մը մէջ Անգլիոյ զայրոյթը եւ թշնամութիւնը Ռուսիոյ ղէմ չը գրգռուի : Բէնեդիկտի Յարին վրայ ձգած է մեծ ապա օրութիւն . բայց այդ տրպաւորութիւնը երկար պիտի տեւէ՝ արդեօք :»

Հազիւ թէ :

ԲՈՐԹ-ԱՐԹՈՒՐԻ ՌՄԲԱԿՈՒՄԸ

Ռուսկի Վէտովովի հրատարակած է նամակ մը . ուր վերաբերեալ ռուս սպայ մը կենդանի գոյներով կը նկարագրէ Ճափնացիներու Բորթ-Արթուրի վրայ գործած առաջին յարձակումը : Նամակին մէջ յայտնի կերպով այն խոր եւ ուժեղ պաւորութիւնը . որ ռուսերուն վրայ ձգեց ճարտարիւններուն յանդուգն ու կատարի յարձակումը : Ռուս զինուորին նամակը գրուած է հիւանդանոցէն և կը կրէ տիրութեան ու յուսահատութեան գրօշուկը :

Եհա նամակը .

5-18 Փետրուար

«Ինչու համար ես հիւանդանոցն եմ : Յունուար 29ին (Փետր 11) Բորթ-Արթուրի մէջ ձիւնի սակալի բորան մը կար : Նշան տրուեցաւ և ես վազեցի իմ մարտիցս Ճամբան որու ալ և ձախ կողմերը սնդուողներ են . և վրան մեծ մեծ քարեր ընկած կան՝ մտի էր : Չէի նկատեր թէ զտիթափի մօտով կանցնէի , երբ քամու հարուած մը գիւ 7 օտքի բարձրութենէ մը վար նետեց կուրծքիս վրայ ընկալ և լաւ մը փշրուեցայ : Բայց , գիտէ՞ք , երբ նեարդները անզգայ են , մարդ ցաւը չզգար : Դէպի մարտիցէն վեր մազցիցայ , հոն անցուցի երրորդ անգուն զիւրը և ցաւերս անհետացան : Փետրուար 1.14ին ինձ յայտնուեցաւ , որ բերդի պատնէլի մը հրամանատար անուանուած եմ : Չը կարծէք թէ ասով պարծենալ կուզիմ — կը կարծիքով այս բարձր գրած տուեմ :

Փետրուար 1ին և 2ին պատնէլիս վրայ շատ մը թնթանողներ շարեցի , հող լեցնել . փոսեր փորել տուի և վերջապէս երբ կրնայի հաղորդել , թէ իմ պատնէլս պատրաստ է , զգացի , օր

ղէջ կըլլամ : Այս բանը յոճածութեան վերաբերեցի . որովհետեւ Յունուար 27 (Յ Փետր) էն մինչեւ փետր. 2- 5ը ոչ մէկ գիշեր քուն չէի մտեր և Աստուած գիտէ , թէ ինչպէս էի կերակուրեք : Սակայն ցաւերս շատ սաստկացան և զիւստոյներս գիւ հիւանդանոց դ կեցին . որտեղէն և կը գրեմ ձեզի : Ինչպէս ժողովուրդը կըսէ , ինձ այնպէս կուգայ , թէ ներսիդիս ջախջախուած է . . .

Յունուար 29ին (Յ Փետր) հաշակաւոր մարտիցին մօտ էի կայնած — երկարական ժայռին , ճարտական սչեքուր համար մտի կէտի մը վրայ : Այնտեղ աւել իմ կրակի մարտութիւնս և շքանշան մը ստացայ : Ասոր վրայ հարաւ եմ եւ : Մեր խեղճ մարտից ամբողջովին ծածկուեցաւ ռուսերու որոտումներուն առկ : Հրազենները զժոխային ազմուկով կը գոռային : Բայց յուզուեւք բոլորովին չէր տիրէր , միայն ակոսներս սկսան ցաւել : Հաւանորէն լսողութեան ջիղերը սաստիկ գրգռուած էին : Սակայն ըզգացում մը մեզ կարապնդէր ընդհանուր մահի այս միջոցին : Տարօրինակ խողովակեան կամ յողովութեան անուշ զգացումն էր այդ — հրաշալի՜ զգացում : Մահուան վրայ ոչ մէկ ըզգացում : Երբ դեռ միայն առաջին ռուսերը մեր մարտիցին վրայ պայթեցաւ , անեն ինչ անյայտացաւ . երազները , մտածումները , վիշտն ու ուրախութիւնը , Մնաց միայն անկարողելի անուշ խողովակեան մը տրպաւորութիւնը :

Եւ այդ մինչեւ վերջը մնաց . Տեսարանը կաշկանդիչ էր : Վճիռ օր մը , ստք . խաղաղ ծովը կը ծփայ պայծառ գոյնիւրով տեսակ մը երեսակայական աշխարհ , կարծես մարդ կը տեսնէ օդի սարսուռը Ահա հեռուն՝ հորիզոնին վրայ կէտեր կը նշմարուին — կէտերը կը շատնան , կը յառաջանան : Կէտերը գծերու կը վերածուին , մօտ , միտ մօտ , նախ գորշ , հիմա թուի : Անտք գիւս հեռուէն , տասնեակներով վերատաշափ . . . սասնելու , տասնեակէ , տասը , ինը վերս . . . պղտիկ , ճերմակ գուռը մը և ապա որոտում մը . . . պոմ . . . մեծը կապանեք — կըսպասեք անհամբերութեամբ — թէ զնդակը ո՞ւր պիտի իյնայ : Մեր մարտիցը ծովի մակերեսոյթէն 40 սաշին անդուռի մը վրայ է կայնուած : Մեր ոտքերուն տակը կը գրասուռի Ռեհրաւեան , ծովակալի նաւը , որու երկաթէ պատի առաջ կիյնայ ռուսըր :

Ջրափռչի ամպ մը կը փայլի սրելին մէջ և կը լուայ նաւին տանիքը : Նաւատիրները կակսին շարժուիլ :

Դարձեալ ամպիկ մը : Ռոտիլ է ռուսըր : Դրոյններուն վրայէն այն կողմը կը ցատկէ և ետեւի կողմը լեռան վրայ անակի պայթիւն մը կորոտայ : Երրորդ ամպիկ մը . . . ամենատակալի ակնթարթը : Այս երկվայրկեաններուն մէջ ես շատ բան տեսայ : Կարծես թէ կշիռ չուներս : Միտի մէջ խոնջութիւն կը տիրէ և զիւսի մէջ այս հարցը կը ծագի — Ի՞նչ լաւ խփեն , կրնան մեր մարտիցին զարնել : Անպամ մը չը հասնիր ռուսըր մէկ ուրիշ անգամ հեռուն կընկնի , այդ ժամանակ երկու հեռաւորութիւններու տարբերութիւնը երկուքի կը բաժնեն և ռուսըր ճիշտ մէջտեղին կը դալի : Սոսկս կընենք մենք , այսպէս կընեն Ճարտարագիւր և ուրիշները . — սակա կը կոչուի նպատակակէտը փնտնել , Եւ յետոյ , երբ

ճիշտ հեռաւորութիւնը գտնուած է , այն ասան թշնամին ռուսերով կը հեղեղէ : Երեսակայեցեք մեր գրութիւնը . . . ճիշտ մեր ժայռի գառիթափին կը զարնուի ռուսըր : Այս ռուսըր մեզ համար ազգանշան մըն էր : Տար ծովեզելեայ մարտիցներ և ասաներկու նաւեր պատասխանեցին այս ողջոյնին :

Ինչ որ հիմայ սկսու , շուտ դուստրէ նկարագրելը , Սպիտակ փրփուրներով ծածկուած ծովը կետար ռուսերու սակ :

(Շարունակելի)

ՋԵՐՊԱՐՏ

(Մանկավարժական)

(Շար. 600րդ քիւիւն)

Բրիչ մանկավարժներու կը մտնանաւք , երբ յառաջ երթալով անուանեք երկու ուրիշ գործունէր , որոնք կազմեն երախայի հոգոյն վերայ . առնեք են ուսուցչին նեղիմա կուրիւնը եւ սերը զէջի իր աշակերտները :

Մարկային հոգին կը խոնարհի հեղինակութեան մը առջեւ , ուսուցչին հեղինակութեամբ դիւրին է լսողել երախային մէջ յառաջանալիք շարկալքը : Ան անհրաժեշտ պէտք է ամենակենդանի բնաւորութիւններու համար , որովհետեւ առնեք կը մտնան ինչ շարին եւ թէ բարիին մէջ , Չարութենէն վնաս մը չտեսնելով կը յարին անոր : Հեղինակութիւնը բնածին է մարդու մէջ , աշխատելով ան ձեռք չի ձգուիլ : Առանց Խնկատի ունենալու աւելի տկար կամ զի մը առջեւ հաճելի կամ անհաճելի երեսուրտ ցանկութիւնը պէտք է գործել կոնսէքուէնտ եւ չբնահայեցալիքնալստան և ինքնուրոյն կերպով , ի հարկէ հաշուելով բոլոր այն պարագաները , որոնք կրնային յառաջ գալ եւ արգելքները , որոնք կրնային ծաղիլ : Այս վարժուեք կը պատճէ տգուն շար ձգտումները անխնայ եւ զգացնել կուտայ անոր իր ասած քային սխալ ըլլալ :

Սերը փոխադարձ զգացումներու , զգացողութիւններու ու սովորութեան ներդաշնակութիւնն է : Իրաւ զժուար է այդ ներդաշնակութիւնը ստեղծել , բայց զայն դիւրացնելու համար յառաջ ընթանք երկու միջոցներ — քառախաղաղ կուտումներէ իր աշակերտներուն հոգեբանութիւնը եւ կը մօտեցան անոնց զգացումներուն ամենայն փափկանկատութեամբ կամ ինք մատչելի կը դասայ աշակերտին զգացումներուն , որ աշակերտը իրեն մօտենայ : Եւ արդէն երախայներուն մէջ կայ քառախաղաղ կուտայ անոր իր ասած քային սխալ ըլլալ :

Սերը կը դիւրացնէ կառավարութիւնը , բայց առկէ զատ ան կարեւոր ֆակտոր մըն է բուն դաստիարակական գործին մէջ , որովհետեւ ան կրթողին հոգու ուղղութիւնը կը հաղորդէ կրթողին :

Հեղինակուրդը անսխալ անգամ բնական բերանս կը պատկանի հորը, իսկ սէրը կը պատկանի մորը...

Մարգարեանի (Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԴԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Թեհրան, 21 փետր.

Շիրազից տխուր լուրեր են գալիս, այնքան տխուր, որ նոյն իսկ անգլո-գայ գրիչը գեթուարանում է գրի առնել նրանց...

ԵՆՈՐՊԱՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԱՆԵՆ

ՄԵԿԻ ՇԱՏՆԻՐԻ ՀԱՄԱՐ

Վերա

Մի՞թէ իսկապէս տղամարդկանց սեռական պատերը տարբերուած է կանանց պատերից...

Տղամարդը իր ընտանիք օրիորդից պահանջում է ո՛չ միայն ողջախոհութիւն, այլև բարոյական մաքուր համբաւ...

Եւ ահա այդ բոլորից յետոյ կանայք ոտքի են կանգնում և միատեսակ իրաւունքներ պահանջում պետութեան ու կեանքի մէջ, միտան...

են սկսել պայտօն մատուցանել: Շիրազից երկու ամիս առաջ թեհրան ժամանած է պատահաբար մեզ հետ ծանօթացած մի պարսն շատ ախուր գոյնեղով է նկարագրում այնտեղացի հայերի թէ՛ առտ նին էլ թէ ընկերվարական կեանքը...

Սյուրբու շարեաց փոքրագոյնն է: Պատրաստուենք լսել մեծագոյնը: Շիրազի՛ նիւթակահապէս ապահով այդ մի բուն հայերը այնքան են վատ միմեանց հետ եւ ա՛յնպէս խրթացած ու հեռացած հայութիւնից, որ նոյն իսկ չեն էլ մտածում իրենց սիրասուն գաւակների համար մի կրթովայր-ղպոց բանալու: Կայ հայ երեսնայ, բայց չկայ նրան հոգեւոր ու մտաւոր սնունդ մատակարարող մի հաստատութիւն, հաստատութիւն, որի կեանքին շատ հեշտութեամբ ընդունուց կտան շիրազի հայերը, եթէ միայն բարեհաճ տրամադրութիւն ունենան, եթէ գտնուի մէկը, որ սրբի ու մաքրի նրանց հոգու եւ ըզգացմունքի թելերի զարաւոր ժանգը...

սակ օրէնքներ, միատեսակ դրաղմունքներ»...

Սյուրբուի մաքերը հանդիստ չեն տալիս Վերային, նա չի շեր-ցերեկ հալումաչ է լինում՝ աշխատելով լուծել օրինել, չը լինելու հարցը: Մի ուրիշ, սովորական կին մտուցութեան կը տար այդ ամենը, իր ներկայի ու ապագայի զբաղիչ հեռանկարով կը ծածկէր անցեալի սեւ բծերը: Բայց Վերան այդ տեսակ կանանցից չէ: Նա անկարող է կեղծել իր զգացմունքները, անկարող է համբոյրները քստանալ սիրած մարդուց և ներքին զգուանք զգալ մտածելով, որ նոյնանման համբոյրներ նա զրոյմել է և ուրիշ — անտեսակ կանանց շրթունքներին»...

— Գէորդ, հարցնում է նա իր նշանածից, արդեօք դու կարո՞ղ էիր ամուսնանալ մի անտակ կնոջ հետ...

— Իսկ ես, շարունակում է Վերան, այդ բողբոջում մտածում էի, թէ բոլոր տղամարդիկ ոչնչով լաւ չեն այդպիսի անտակ կանանցից...

Սյուրբուի գլխակցութիւնը օրէցօր սաստկանում է և յուսախաբ օրիորդի համար կորստեան վիճ պատրաստում: Նա առաջնայ չափ սիրում է Գէորդին, բայց չէ կարողանում մտանալ արատաւոր անցեալը, ուստի վճռում է զեն չը պահկուած բաժանուել նրանից, բաժանուել յաւերտան, Բայց այդ դեռ բոլորը չէ: Նա լաւ հասկացել է ընտանեկան թշուառութիւն...

նախք ու շարժալից հարուածները: Կարող է բացակայութեան շնորհիւ նրանք իրենց երեսնաների դաստիարակութեան և կրթութեան սուրբ գործ յանձնում են տեղական մուլաների և սէյիդների ձեռքը, որոնք իրենց այլացեղ ու այլադաւան աշակերտներին սխորաստիքական գիտութիւնների հետ զուգընթացարար ստուցանում են նաև «նամազը» (աղօթք) ձէսը, արարողութիւնը: Ամենայն օր իրենց հոգու անարատութիւնն ու թարմութիւնը դեռ եւս պահպանած այդ հայ մանուկները լացակուած դառնում են սուր և ելալահառաչ ձայնով գանգատում իրենց ապագա հայրիկներին, որ այն ինչ մուլան կամ այնինչ սէյիդը ստիպել է իրենց նամազ դնել, եւ նրա «բիսմիլա՛յ ուսմա՛նը ուսմա՛մ»... (Յանուն Հօր եւ որդւոյ և հոգւոյն սրբոյ) խօսքերը կրկնել:

Ամենայն օր անսիրտ եւ քար հայրիկները տեսնում են իրենց գաւակների արտասուածքը աչքերը եւ լըսում նրանց խոսած ու բեկբեկուող ձայները, բայց ոչ մի հոգ ու փոթ չեն տանում նրանց հոգեկանն ու մըտաւորականը բարւոքելու...

Եւ Շիրազի այդ հայերը իրաւունք ունեն իրենց որդոց հետ այդպէս անգրթօրէն վարուելու: Նրանք փոզի մարդիկ են, նրանք սիրտ, հոգի, խիղճ եւ զգացմունք ծախած հայեր են... Բայց ի՞նչ են անում Պարսկահայրկանստանի թեմի ջրիկ առաջնորդը եւ առաջնորդական փոխանորդ վարչակազմը: Օ՛, նրանք մեծ գործի վերայ են... Նրանք միտինգներ կազմակերպելով մի ամբողջ ազգ են ուզում ազատել, մի ամբողջ ժողովուրդ ցանկանում փրկել միանգամայն արհամարհանք թափելով այդ ամբողջութիւնը կազմող մասերի վրայ...

Ների պատճառը, ըմբռնել է շարիքի շարժանիքը, որի արժանանքը թագնուած են հասարակական բարոյականութեան մէջ, երկու սեռերի անհասարակութեան, իրաւունքների, պահանջների, դաստիարակութեան ու կենցաղի տարբերութեան մէջ, նա լաւ գիտէ, որ միայն այդ վեասակտր կարգերն ու սովորոյթները արժատախիլ անելով կարելի է շարիքը վերացնել, անթիւ-անհամար կանանց հեծեմանքին վերջ տալ, ընտանեկան շատ գծտեթիւնների առաջն առնել: Եւ ահա նա որոշում է զոհնել սիրի կե, նախ շատելու համար, որպէս զի գրոնով մտածել ստիպել իր սեռակիցներին, ամբողջ հասարակութեանը...

«Ես քաջութեամբ եւ անտարբերութեամբ եմ նայում իմ մահուան վրայ, գրում է Վերան իր յիշատակարանի վերջին երեսում, ոչ մի բան ինձ չէ վախեցնում, ես արդէն այրել եմ իմ յետեւից բոլոր կամուրջները: Վերազարձ չը կայ... Յոյսերից ու անուրջներից զրկուած կեանքը գլորում է ինձ զէպի ներքեւ, զէպի կորստեան անգունդը...»

Այն մարդիկ, որոնք իրանց ստորեայ կուպիտ կեանքում միշտ ծիծաղում էին իմ գաղափարների վրայ անբարոքործելի շափազանցութիւններ համարելով նրանց, այն տղամարդիկ, որոնք ծիծաղում էին ինձ վրայ, թէ և հոգու խորքում խոստովանում էին իրանց յանցանքը — այդ բոլորն էլ գորնէ մի բողբոջ կը գազրեն ծաղրելուց, եթէ իմանան...

Եւ ամեն մի նրբամիտ ու զգայուն

Եթէ Պարսկահայրկանստանի թեմի առաջնորդն ու իւր փոխանորդը սըրտացաւ եւ գործունեայ մարդիկ լինէին, ամենից առաջ ջանք գործ կը զնէին Շիրազի հայերին կորզել անյայտութեան և մտացուրթեան պաղ գրկից աւաղով նրանց զպոց եւ սուսցիլ...

Ի՞նչ անենք... Ուրեմն ձե՛ռք քաշենք Շիրազի հայերից, ուրեմն խաչ զնենք նրանց գոյութեան վրայ... Ի՞նչ մի՞թէ դա մեզ պատիւ կը բերի, — ո՛չ երբէք... Ուրեմն այդ անպատուութիւնից ազատուելու համար օր առաջ մտածենք բարւոքել նրանց դրութիւնը: Մտածենք եւ — գործի ձեռնարկենք...

Հրահուս

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

Ամէն կողմէ ընկերական բազմաթիւ շրջանակներէ մեզ անհատնում հասցէներ կը զրկուին, որ անոնց թերթ զրկենք: Մենք այստեղ ստիպուած ենք ըսել, որ «Երաժշտ» չի հրատարակուի կուսակցական օժանդակութեամբ, այլ անոր հրատարակումը մենք ապահոված ենք մեր սեփական միջոցներով և ծանր զոհողութիւններ յանձն առնելով, ուստի ի վիճակի չենք ձրի թերթ ուղարկել:

Այս առթիւ ընդհանրապէս նորէն գիտել կուտանք թէ «Երաժշտ» թաժանորդագրութիւնը կ'անխիղճ է և իր հասցէին հետ բաժնեգրին ալ չը զրկողներուն

կին, կարգաւով իմ այս յիշատակարանը՝ կը մտածէ ինձ հետ ժխտին, կը զգայ նոյն տանջանքները, նոյն դառնութիւնները...

Եւ եթէ ինձ աջողութի գոնէ մի փոքրիկ քար դնել ապագայի ողջախոհութեան և մաքրութեան հրաշալի շինուածքի մէջ, այն ժամանակ արժէ դրա համար կեանք զոհել...

Եւ նա իսկապէս գոհում է իր մատող կեանքը:

Դրանով էլ վերջանում է գրքոյի բովանդակութիւնը, որի ամենագլուխաւոր արժանիքը ոչ հիմնական գաղափարն է, ոչ թէ արծաթած մտքերն են, այլ հոգեբանական յրրութիւնը, որ դժբաղդաբար անկարելի է վերաբարձրել գրուածքը համաօտելիս:

Այո՛ որ տղամարդն էլ պարտաւոր է ողջախոհ և անարատ լինել միշտ և ամուսնանալը, ինչպէս և կանայք — այդ գաղափարը շատ անգամ է կրկնուել, շատ անգամ է գրուել նրա մասին: Բայց նա երբէք այնպիսի կարճ, կտրուկ և միեւնոյն ժամանակ չափազանց ազդու արտայայտութիւն չէ ստացել, ինչպէս Վերայի յիշատակարանում: Հէնց դրա մէջն է թաղնուած «Մէկը շատերի համար» գրքոյի արտակարգ ողջախոհութեան գաղտնիքը:

Ն. ԹՈՓՉԵԱՆ

«Մուտ»

Վերջ



գիմումները ինկատի չեն առնուի :

Նոյնպէս մեզ կը դրկուին այս ու այն կողմէ ազգեր և յայտարարութիւններ առանց ստակի : Չեն բնգունուի քի կատարուելիք այդպիսի գիմումներ :

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴ

Խուականէս իբր 3 տարի առաջ քաղաքիս կիպրոսի ազգ. որբանոցը խրկուած և մինչեւ ցարդ հոն խնամուող Մարաշիան Գալուստ և Յակոբ անուն երկու որբերու ազգականները կը հրաւիրուին ազգային խորհրդարան . յիշեալ որբերու մասին կարեւոր տեղեկութիւններ ստանալու համար :

Թաղ. Խոր. Ս. Սարգիս Եկեղեցւոյ (Կնիք) Վանա . 15 Մարտ 1904

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

34 տարեկան պուկար աղջիկ մը, որ մականդոնական ապստամբութեան ատեն չէթա մը առաջնորդած է, այժմ Օսէսայի կառավարութեան ներկայանալով կուզէ իբրեւ կամուր արեւելեան Ասիա մեկնիլ :

— Կամուր գրուելու համար կալացէն 13 պուկարներ մեկնած են դէպի Օսէսա :

— Նաչեվիչ վերջապէս յաջողութիւնք պուկարական մերձեցումը : Երկար ատենէ ի վեր տեղի ունեցած բանակցութիւններէ ետք ընդունուած էն և երեւի շուտով պիտի ստորագրուին հետեւեալ կէտերը :

- 1) Արտահանուած վաճառքներուն համար կը վերանայ մաքսային սահմանադիւր, 2) Ընդհ. ներում կը շնորհուի բոլոր մականդոնացիներուն, որոնք մասնակցած էին յեղ. շարժումներուն, 3) Ազատ կը ձգուի Մականդոնայէն և Ատրի անուպոլսոյ նահանգէն գաղթող բոլոր փախստականներուն վերադարձը, 4) 12 պուկար սպաներ մականդոնական ոստիկանութեան մէջ պաշտօնի կը կոչուին : Մականդոնիոյ և Ատրիանուպոլսոյ նահանգին համար կանուանուին պուկար ազգաբնակչութեան մէջէն պաշտօնեաներ, 5) Ընդհ. հակիչին կը տրուի պուկար օդ նախաձեռնութիւն, 6) կը բացուին վեց բարձրագոյն դպրոցներ, ֆրանսական լիսէներու ծրագրով, ուր պիտի աւանդուին իրաւաբանութիւն և բնկերաբանութիւն : Լիսէներու ծախքերը կը գոցուին նահանգային սնտուկներէն, 7) Ռատովիի և Քիւստէնաիլիի միջեւ երկաթուղիի գիծ մը պիտի հաստատուի :

Ասոնց ի փոխարէն Պուկարիա կը խոստանայ իր հողին վրայ արգիլել յեղ. չէթաներու և կօմիտէներու կազմուիլը՝ մշտական ժամանակներու համար :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՊ

Յամաքի վրայ գարնուելու համար թշնամի կողմերը կը սեսնեն պատրաստութիւններ : Ռուսերը ամբողջացած են Անթուզըլ ձաբոնացիները կամրացնեն Չիւնամբօի և Բիոնգեանգի ծովեղբերքները : ձաբոնացիները կը խուսափին ուսական յառաջապահներու հետ վարնուելէ, որովհետեւ ուղղական տեսակէտով այդ օրինակ ընդհարումներ աննպասակ կը համարեն :

— Բեթերսպուրկէն կը տեղեկացուի, որ ձաբոնացիները իրենց ցախ թելին համար բանակատեղի ընտրած են Բիոնգեանգը, որովհետեւ այստեղը ունի ուղղական մեծ առաւելութիւններ : ձաբոնացիները հոն ամբանալի ետք իրենց յառաջապահները զրկած են մինչեւ Անչու, ուր կը գտնուի ճաբոնական հեծելազօրաց և թնթանթաձիգներու մեծ բազմութիւն :

— Մարքիզ Իթօի առաքելութիւնը հասած է իր նպատակին : Իթօ ճաշկերոյթի մը միջոցին ճառ մը խօսած է և մեծ ապուրոթութիւն ձգած է քորէացիներուն վրայ : Մարքիզը յորհորած է Քորէացիներն ձգել աւձնական հաշիւները և հետեւիլ հայրենիքի շահերուն, եթէ կուզեն պահել իրենց ազգային անկախութիւնը :

— Փոթօրկի բանուելով Սուսայի ծոցին մէջ ինկած է ուսական տօրպէտօնաւ մը : Նաւաստիները աղատած են :

— Յարուհին որոշած է Չաակի տօններուն առթիւ նուէրներ բաշխել տալ պատերազմի գացող զինուորներուն : Յարը արամագրած է պէտք եղածին չափ ստակ նուէրները պիտի բողկանան կողովի մը մէջ զետեղուած ուսելիքներէ, ծխախոտէ, կարելու համար պէտք եղած նիւթերէ եւն : Յարուհին կուզէ բանակին մէջ սիրելի գառնալ, Չօրքը զինքը սկսած է մայրիկ կոչել :

— Ըէյլի Քրօնիլը կը հաղորդէ, որ ուսական գործակատարներ, չը կարողանալով ծրարուի և Գերմանիոյ մէջ փոխառութիւն մը յաջողցնել, եկած են Լօնտօն, ուր նոյնպէս մատնուած են անյաջողութեան, որովհետեւ Լօնտօնի սեղանաւորները պահանջած են հարիւրին 7ու կէս տուկոս :

— Օտէսայի կառավարիչը հրէայ

հարուստներուն քաղաքավարի սպանալիք մը կարողացեր է, անոնցմէ ի նպատ պատերազմին կամուր նուէրներ առնելու համար : Ան յարարարած է, որ եթէ հրէաները շարունակեն իրենց ըմբոստութիւնը, ինք Չաակի առթիւ չը պիտի կարողանայ հրէական հալածանքներու առջեւ տանել : Անգուի կեպով Օտէսի բանուորներէն կը յափշտակուին «կամուր նուէրներու» Բանուրական շրջանակներու մէջ արդէն սկսած է սով և անթոթութիւն : Շատ մը գործարաններ գոցուած են :

— Չօրավար Քուրօթթիին հասած է Քարպին և մեծ ոգելուրութեամբ ընդունուած է : Ռուսերը մեծ յոյսեր դրած են անոր վրայ : Բայց զօրավարը ինք այնքան ալ լաւատես չէ : Ան շուէտացի սպաի մը յայտնած է, որ պատերազմը հաւանականօրէն պիտի տուէ մինչեւ երկու տարի :

— Բօթթ-Կրթութի գրաման լուրը չը հաստատուեցաւ : Անկէ ետք ճաբոնացիք նորէն գործած են յարձակում մը, բայց երեւի առանց շոշափելի արգիւնքի մը : — Փոխ. ծովակալ Մաքարով իր տորմիզով Բօթթ-Կրթութի մօտակայ կղզիները երթալով ցոյց մը ըրած է :

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Սուլթանը իր խաղերուն վերջ մը չի բերեր և մականդոնական բարեփոխումները կը մնան միայն թուղթի վրայ գրուած առաջնորդ երկու պետութեան դեսպաններուն հաղորդած է, որ ինք 25 եւրոպացի սպաներէ աւելի չի կարող զրկել Մականդոնիա : Գեսպանները կը ընդդիմանան : Խաղը կը շարունակուի անվերջ :

ՃԱՐՈՆԱԿԱՆ

Յրանսայի Կ. Պոլսոյ դեսպանը Կրան խորհուրդ առած է՝ ընդունել երկու պետութեանց մականդոնական ոստիկանական կողմին համար գրած առաջարկները :

— Բարնաբատինեան միարանութիւնը հրաման ստացած է գոցել իրենց վաճ.քը : Վանականները ամբողջած են ներքը և չեն ուզեր հնազանդիլ : Ոստիկանութիւնը անոնց գէժ միջոցներ ձեռք առած է :

ՃԱՐՈՆԱԿԱՆ

Մասնաւոր հեռագրով մը «Յայթիւն» կը հաղորդէն թօթթօէն — թէ այդ քաղաքի մէջ հրատարակուող «Իրօք» լրագիրը իր մէկ ուսուէր և հայրենիքը մատնող յօդուածին պատճառով արգիլուած է : Հեղինակը մէկ ամսուան բանտարկելութեան դատապարտուեցաւ : Պատգամաւոր

ներու խորհրդարանին մէջ լրագրի սեփականատիրոջ արտաքստու մը առաջարկուեցաւ, ինք Բարթամնաի անդամ է :

Ս.ՅԱՆՆԻՍՏԱՆ

Լուր կայ թէ Սֆրանկատանի Լմիլը թունաւորուած է :

ԳԵՐՄԱՆԻԱ

Կայսր Վիլհելմ իր միջերկրական ճամբորդութեան միջոցին նաբօլի մէջ սիրալիք տեսակցութիւն մը ունեցած է Իտալոյ թագաւորին հետ :

Ճաշկերոյթի մը միջոցին թագաւորները խմած են եռեակ նիւզակակցութեան և ընդհ. խաղաղութեան համար : — Այս ճանապարհորդութեան կը արտի քաղաքական նշանակութիւն :

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Սօֆիայի նորակազմ «Քնար» երկսեռ երգիչի ընկերութեան առաջամասնակեայ մասնախումբը կուգայ յայտարարել տեղւոյս երկսեռ ազգայնոց, թէ խորին շնորհակալութեամբ ընդունեց կիրակնօրեայ լսարանին առթիւ քանի մը ազգայիններու նախաձեռնութեամբ հաւաքուած 32 ֆրանքը :

Ի դիմաց Մասնախումբին Ատենապիւր Ատենապետ Ե. Յովնանեան և Մ. Յովնանեան 15 մարտ 1904 Սօֆիա

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԲՈՒՌԱՆ
ՊՈՒԼԿԱՐԵՐԷՆ—ՀԱՅԵՐԷՆ—ՏԱՃԿԵՐԷՆ
Կը բաղկանայ 592 երեսներէ, պարունակելով մօտ 30,000 բառեր և ոճեր :
Ըն իր բուրք մաքուր շապուրթիւն Եֆեղ կաղմ

Սկզբը, բացի յառաջաբանէն, ունի քերականական կարեւոր գիտելիքներու և կանոններու ամփոփումը (40 երեսի չափ) : Մէկ խօսքով բառարան մը որ իր պարունակութեամբ և իր չափաւոր գնովը ամենէն յարմար օժանդակը կը հանդիսանայ պուկարներէն լեզուն որովի փափաքող մեն դասակարգի մարդոց, թէ ուսանողին, թէ վաճառականին և թէ պարզ արեւստաւորին :

ԳԻՆ 5 ՃՐՄԵՐ

Գիմի հեղինակին Աւստր Մկրտիչեան Սօֆիա

ՕՏՎՈՐՈՒՆԻԿՅ

Мурадъ-Ераносянъ

Печатьница „Взаимность“ Варна